Հայտարարություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի դրույթներով, հայտարարում է միջին մասնագիտական կրթական ծրագրերի **Մաթեմատիկայի և վիճակագրության (ոչ հանրակրթական)** մոդուլներ և առարկաներ դասավանդող դասախոսների թափուր հաստիքների մրցույթ:

Դասավանդվող առարկաներ

Մասնագիտական առարկաները կամ մոդուլները	**Ժամերը**
Մաթեմատիկական հաշվարկների հիմունքներ/ Մաթեմատիկական հաշվարկներ	396
Վիճակագրություն/ Վիճակագրության հիմունքներ/ Վիճակագրության ընդհանուր հմունքներ	544
Ֆինանսական հաշվարկներ Excel ԿՓԾ միջ.	576
Ֆինանսային մաթեմատիկա	828

Պետական կրթական չափորոշիչով դասավանդողին ներկայացվող պահանջներ՝ բարձրագույն կրթության «Մաթեմաթիկա», «Ֆինանսական մաթեմաթիկա» կամ «Վիճակագրություն» մասնագիտություններով մաթեմատիկայի, կամ վիճակագրության կամ ֆինանսական մաթեմատիկայի մագիստրոսի կամ բակալավրի որակավորում[1], բարձրագույն կրթության «Մաթեմատիա», «Կիրառական մաթեմատիկա», «Մաթեմատիկա: Համակարգչային գիտություններ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Մեխանիկա», «Մաթեմատիկական մեթոդներ և գործառնություններ տնտեսագիտության մեջ», «Վիճակագրություն», «Ֆինանսական մաթեմատիկա» կամ «Տնտեսամաթեմատիկական մոդելավորում» մասնագիտություններով մաթեմատիկայի, վիճակագրության, ֆինանսական մաթեմատիկայի, տնտեսագիտության, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, կիրառական մաթեմատիկայի, մեխանիկայի բակալավրի, կամ մանկավարժության բակալավր ուսուցչի, մաթեմատիկայի, վիճակագրության, ֆինանսական մաթեմատիկայի, տնտեսագիտության, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, կիրառական մաթեմատիկայի, մեխանիկայի մագիստրոսի կամ ինտեգրված կրթական ծրագրի շրջանավարտի մասնագիտական որակավորում[2]:

[1] ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշումից հետո, 2018 թվականից սկսած, ՀՀ բուհերի շրջանավարտների համար:

[2] ՀՀ կառավարության 1997 թվականի մայիսի 29-ի N 154 որոշման գործողության ժամկետում ՀՀ բուհերի շրջանավարտների համար՝ մինչև 2003 թվականը ներառյալ, 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-Ն որոշման որոշման գործողության ժամկետում ՀՀ բուհերի շրջանավարտների համար՝ մինչև 2011 թվականը ներառյալ, 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման գործողության ժամկետում ՀՀ բուհերի շրջանավարտների համար՝ մինչև 2017 թվականը ներառյալ:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (լրացվում է տեղում),
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. անձը հավաստող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն (Ձև 4),
6. մեկ լուսանկար՝ 3*4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը և/կամ գիտական աստիճանը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի օգոստոսի 01-ից 2022թվականի օգոստոսի 12-ը ներառյալ, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 16:00-ը:

Փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին՝ ք.Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կենտրոնական մասնաշենք, 4-րդ հարկ, 401 աշխատասենյակ:

Մրցույթը տեղի կունենա 25.08.2022թվականին, ժամը 11:00-ին, հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կենտրոնական մասնաշենք: